

# Դեֆյացիան կամ դեզինֆյացիան համաշխարհային տնտեսությունում

Ֆինանսական ճգնաժամի պայմաններում ինֆյացիայի մակարդակի արագ նվազումը և տնտեսական աճի տեմպերի դանդաղումը առաջացնում են դեֆյացիայի ռիսկի ուժեղացում, այսինքն՝ իրավիճակ, երբ գների մակարդակն իջնում է տնտեսական զարգացման տեմպերի երկարատև նվազման հետ միաժամանակ:

Ինֆյացիան իրենից ներկայացնում է գների ընդհանուր մակարդակի շարունակվող և երկարատև բարձրացման պրոցես: Հակառակ դրան դեֆյացիան հանդիսանում է գների ընդհանուր մակարդակի նվազման երկարատև պրոցես: Սակայն առանձին ապրանքների գների նվազումը չի կարող համարվել դեֆյացիա: Պետք է տարբերել դեֆյացիայի իրավիճակ, որը, դեզինֆյացիայի բարենպաստ իրավիճակից ելնելով, դիտվում է՝ որպես բացասական տնտեսական երևույթ:

Դեզինֆյացիան, որը ինֆյացիայի տեմպերի և գների աճի դանդաղումն է, նպաստում է տնային տնտեսությունների գնողունակության բարձրացմանը: Դրա հետ միասին դեֆյացիան հատկապես վտանգավոր է տնտեսության համար, քանի որ այն նպաստում է դեֆյացիոն պարույրի ձևավորմանը, որը կարող է առաջացնել աստիճանական ետաճ և որից շատ դժվար կլինի դուրս գալ: Դեֆյացիոն պարույրի հիմքում ընկած են երեք մեխանիզմներ.

- Սպասելով գների նվազմանը՝ տնային տնտեսությունները հետաձգում են երկարաժամկետ օգտագործման ապրանքների գնումը, որն էլ առաջ է բերում համախառն պահանջարկի կրճատում: Իրենց հերթին, ձեռնարկությունները, ելնելով նոր պահանջարկից, սկսում են կրճատել արտադրանքի ծավալները:
- Երկրորդ մեխանիզմը նկարագրվել է դեռևս 1933 թվականին ամերիկացի տնտեսագետ Ի. Ֆիշերի կողմից, ով առաջարկել է «դեֆյացիա պարտքերի միջոցով» տեսությունը: Դեֆյացիան մեխանիզմներն մեծացնում է գների փոփոխմանը համապատասխան ոչ ինդեկսավորված պարտքի իրական արժեքը: Այս մեծացումը վատթարացնում է փոխառուների և հատկապես ձեռնարկությունների դրությունը, որոնք ստիպված կան կրճատում են իրենց ներդրումները, կամ սնանկանում: Տնային տնտեսությունների պարտքերի ավելացումը կարող է ստիպել նրանց ավելացնել իրենց խնայողությունները, որը նույնպես առաջ է բերում համախառն պահանջարկի կրճատում: Ձեռնարկատիրական գործունեության վատթարացման հեռանկարը ստիպում է բանկերին խստացնել վարկավորման պայմանները, որն էլ իր հերթին հանգեցնում է վարկավորման կրճատմանը:
- Դեֆյացիան կարող է կաթվածահար անել դրամավարկային քաղաքականությունը, քանի որ բազային տոկոսադրույքը հնարավոր չէ սահմանել զրոյից ցածր մակարդակի վրա: Դեֆյացիան տնտեսությանը պարտադրում է իրական տոկոսադրույքի մակարդակը, որն ավելի բարձր է, քան անիրաժեշտ է, ինչպես նաև նպաստում է ետաճի պարույրի ձևավորմանը. որքան արագ են դանդաղում տնտեսական աճի տեմպերը և նվազում գները, այնքան ավելի արագ են բարձրանում իրական տոկոսադրույքները՝ ավելի ու ավելի դանդաղեցնելով տնտեսության աճը:

2008 թվականի աշնանից եվրոյի գոտում դիտվում էր գների ընդհանուր մակարդակի նվազում. Ֆրանսիայում և եվրոյի գոտում ինֆյացիայի տեմպերը 4 %-ից նվազեցին (2008 թ-ի հուլիս) մինչև 1,2 %-ի (2008 թ. դեկտեմբեր), որը բացատրվում էր հետևյալ գործոններով՝

- նավթի և հումքի համաշխարհային գների նվազումով. 2007 թ-ի հուլիսից մինչև 2008 թ-ի հուլիսն այդ գները 50 % իջել են եվրոյով և 75% դոլարով:
- Տնտեսական դինամիկայի դանդաղեցմամբ. 2008 թ-ի հունիսի կանխատեսումների համաձայն՝ 2008 թվականին Ֆրանսիայի տնտեսության աճը պետք է կազմեր 1,6 %, այնինչ այն կազմեց ընդամենը 0,7%:

Հնարավոր է, որ ԱՄՆ-ում և եվրոյի գոտու որոշ երկրներում 2009 թվականին նկատվեն ինֆյացիայի բացասական տեմպեր: Միաժամանակ դեֆյացիոն պարույրի առաջացումն այսօր

անհավանական է թվում, քանի որ մի քանի ամիսների ընթացքում ինֆլյացիայի բացասական տեմպերի պահպանումը բավարար չէ դեֆլյացիայի առաջացման համար: Այսօր, գործում են մի շարք գործոններ, որոնք արգելակում են դեֆլյացիայի առաջացմանը:

- Գների և աշխատավարձերի դինամիկան մնում է դրական. ապրանքների (բացառությամբ էներգակիրների և պարենամթերքի) գները քիչ են վնասում էներգետիկ ապրանքների և պարենամթերքի գների զարգացմանը: Անվանական աշխատավարձի կայունությունը նույնպես հանդիսանում է հզոր կայունացնող գործոն՝ դեֆլյացիայի ռիսկի նվազեցնող:
- Տնտեսության ու ֆինանսական հատվածի աջակցմանն ուղղված միջոցառումները նվազեցնում են գների վրա բացասական ազդեցության հավանականությունն ու մասշտաբները: Այսօր, ամբողջ աշխարհում տնտեսության աճը արգելակվում է «վստահության շոկով» և ֆինանսական համակարգում տեղի ունեցող ցնցումներով: Բայց շատ երկրների կենտրոնական բանկեր և կառավարություններ արագ և մասշտաբային միջոցներ են ձեռնարկել ֆինանսաբանկային համակարգին աջակցելու և սպառողական ու ներդրումային պահանջարկին խթանելու համար: Այս ամենը նշանակալի սահմանափակում է տնտեսությունում անվերահսկելի դեպքերի զարգացումների ռիսկերը:
- Ինֆլյացիայի սպասումները մնում են դրական: Դեֆլյացիան անհավանական է, եթե ձեռնարկությունները և տնային տնտեսությունները շարունակում են սպասել գների բարձրացմանը: Եվրոպական կենտրոնական բանկի փորձագետների կողմից իրականացված հարցումների համաձայն՝ Եվրոյի գոտում ինֆլյացիայի սպասումները մոտական 5 տարիների ընթացքում չեն գերազանցի տարեկան 2 %-ը. նման մակարդակը հանդիսանում է Եվրոպական կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության նպատակը, որը նպաստում է նաև ինֆլյացիայի սպասումների կայունությանը:

Զնայած այն բանի, որ Եվրոյի գոտում մինչև 2009 թվականի կեսերը ինֆլյացիայի տեմպերը կլինեն բացասական, այնուամենայնիվ, 2009 թվականի աշնանից կդառնան նորից դրական, որը հետևանք է նավթի համաշխարհային գների նվազումից առաջացած շոկի հետևանքների վերացման, ինչպես նաև կենտրոնական բանկերի և կառավարությունների կողմից հակաճգնաժամային միջոցառումների ծավալման: Կանխատեսումների համաձայն՝ 2009 թվականի երրորդ եռամսյակում ինֆլյացիայի տեմպերը Եվրոյի գոտում կկազմեն 1,5 %, իսկ 2010 թվականին՝ 1,4 %-ից մինչև 1,8 %:

Ֆրանսիական տնտեսագիտական կոնյունկտուրայի դիտարկումների կենտրոնի վերլուծությունների և կանխատեսումների բաժնի աշխատակիցները քննության են ենթարկել համաշխարհային տնտեսությունում դեֆլյացիա թույլ չտալու խնդիրը: Ըստ 2008 թվականի դեկտեմբերին կազմված կանխատեսումների՝ 2009 թվականին համաշխարհային տնտեսության աճի տեմպերը կկազմեն 1,6%. Եվրոյի գոտում՝ (-0,5 %), Գերմանիայում և Ֆրանսիայում՝ (-0,4 %), Մեծ Բրիտանիայում՝ (-1,2 %), ԱՄՆ-ում՝ (-0,6 %), Չինաստանում՝ 7,8 %, Ասիայի մյուս երկրներում՝ 4,3 % և Մերձավոր Արևելքի երկրներում՝ 5,5 %: Առաջատար երկրներում ընդունված ֆինանսական համակարգի առողջացմանն ուղղված միջոցառումները դեռևս չեն ազատել համաշխարհային տնտեսությանը իրացվելիության պակասից: Պետության պարտքային պարտավորությունների նկատմամբ ընկել է վստահությունը, և շատ երկրներ տնտեսությունը վերականգնելու նպատակով ստիպված են օգտագործել բյուջետային միջոցները: Ֆինանսական դժվարություններ են նկատվում նաև զարգացող շուկաներ ունեցող երկրներում, որը նույնպես դանդաղեցնում է համաշխարհային տնտեսության աճի տեմպերը: Վերջին ամիսներին նավթի համաշխարհային գների նվազման էֆեկտը փոխհատուցվեց պահանջարկի ընդհանուր կրճատմամբ (ինչպես ներքին պահանջարկի, այնպես էլ արտաքին): Նման պայմաններում որոշ երկրներում (Իսլանդիայում, Էկվադորում) դեֆլյացիան սկսեց զարգացում ապրել:

Ձարգացած երկրների տնտեսությունը տուժում էր այնպիսի գործոններից, ինչպիսիք են արտադրական հատվածին ֆինանսավորելու ֆինանսաբանկային համակարգի անկարողությունը, մասնավոր խնայողությունների տիպատողների հրաժարումը ներդրումներ կատարելուց և արտաքին պահանջարկի նվազումը: Այսպես, Գերմանիան կրում է արտաքին առևտրի ծավալների կրճատման և իր ձեռնարկությունների կողմից հարկադրաբար 100 % ինքնաֆինանսավորման ապավինելու բացասական հետևանքները: Դժբախտաբար,

արձանագրվում են ամենացավալի կանխատեսումները, և նման պայմաններում մեծանում է այն ռիսկը, որ համաշխարհային տնտեսությունը ճգնաժամից անցում է կատարում դեֆլյացիային:

Հարստության նվազումը, խնայողությունների աճի տեմպերի արագացումը, տարբերակտիվներից (օրինակ՝ անշարժ գույքից) ստացվող եկամուտների անկումը ազդում են տնտեսական սուբյեկտների վրա, որոնք սկսում են ակնկալել հետագա գների նվազում: Այս ամենը մեծացնում է դեֆլյացիայի առաջացման ռիսկը:

Վարկային շուկան շարունակում է ապրել դժվարին ժամանակներ կապված ֆինանսական շուկաներում պահպանվող լարվածության հետ: Եվրոյի գոտում, չնայած Եվրոպական կենտրոնական բանկի կողմից իրականացված դրամավարկային քաղաքականության մեղմացմանը, հիփոթեքային վարկերի տոկոսադրույքը սկսած 2007 թվականի հուլիսից մինչև 2008 թվականի հոկտեմբեր ամիսը բարձրացել է 0,5 % -ով: Վարկերի սահմանափակումները և վարկավորման պայմանների խստացումները հիմնականում անդրադառնում են մանր և միջին ձեռնարկությունների վրա:

Մինչև 2008 թվականի կեսերը ինֆլյացիայի մակարդակը բարձրացավ նավթի և հումքի գների բարձրացմանը համընթաց: Ինչևէ, 2008 թվականի երկրորդ կեսին այդ ցուցանիշը հիմնովին փոխվեց՝ կապված նավթի և հումքի գների նվազման հետ: Այս ամենը հանգեցրեց նրան, որ շատ զարգացած երկրներում 2008 թվականի վերջին ինֆլյացիայի մակարդակի իջեցումը կազմեց մոտ 2 %:

Աշխարհի տարբեր տարածաշրջաններում ներքին պահանջարկի նվազումը հանգեցնում է համաշխարհային տնտեսությունում առևտրի դանդաղեցմանը. համաշխարհային ներմուծման աճի տեմպերը նվազել են՝ 2007 թվականին կազմելով 7,7 %, 2008 թվականին՝ 4,4%, իսկ 2009-ին՝ մոտ 0,7%: Այս ամենն առավելապես բացասաբար է անդրադառնում այն երկրների վրա, որոնց տնտեսության աճն ապահովվում է արտահանմամբ: Այդպիսի երկրների շարքին են դասվում ճապոնիան և Գերմանիան: Զարգացող շուկաներ ունեցող երկրները նույնպես զերծ չեն մնում տնտեսության աճի տեմպերի դանդաղեցումից. նման երկրներում տնտեսության աճի տեմպերը համապատասխանաբար կազմել են՝ 2007 թվականին՝ 7,5 %, 2008-ին՝ 6%, 2009-ին՝ 4,2%: Չնայած այս երկրները անհամեմատ քիչ վնասներ են կրել հիփոթեքային ճգնաժամի ազդեցությունից, քան զարգացած երկրները, այնուամենայնիվ, ֆինանսական ճգնաժամը իր ուրույն ազդեցությունն է ունեցել հետևյալ երեք ուղիներով.

- հումքի գների անկման,
- օտարերկրյա ներդրումների և արտաքին ֆինանսավորման ծավալների կրճատման, որը նկատվում էր 2008 թվականի սեպտեմբերին,
- արտաքին առևտրի դանդաղեցման՝ պայմանավորված համաշխարհային պահանջարկի կրճատմամբ՝ 2008թ-ին՝ 4,4 %, 2009թ-ին՝ 0,6%:

Զարգացող երկրները առաջիկայում կբախվեն առևտրի պայմանների վատթարացման հետ: Առավել մեծ վնասներ կկրեն Չինաստանի տնտեսության շինարարության, մետալուրգիայի, տեքստիլ արդյունաբերության և այլ ճյուղերը:

Ասիական և լատինաամերիկյան մի շարք երկրներ, որոնք արդեն իսկ դասեր են քաղել դեռևս 1990-ական թվականների ճգնաժամից, կուտակել են զգալի արժույթային պահուստներ, որոնք թույլ են տալիս պաշտպանվել կուրսի տատանումների ռիսկից: Արևելյան Եվրոպայի երկրները չունեն նման պահուստներ, այդ իսկ պատճառով էլ այդ երկրներից մի քանիսն ընկան ծայրաստիճան խուճապի մեջ: Չի բացառվում նաև նման երկրների սնանկացումը, որը կարող է իր ուրույն ազդեցությունն ունենալ հարևան երկրների և գործընկերների վրա: Նման դեպքերում տարբեր երկրների քաղաքական և տնտեսական մարմինները փորձում են մշակել համապատասխան միջոցառումներ երկրի տնտեսությունն արագ վերականգնելու համար:

Ինչպես ցույց է տալիս նախկին ճգնաժամների փորձը, դեֆլյացիայի պայմաններում շատ դժվար է վերականգնել տնտեսական համակարգը և միևնույն ժամանակ լիարժեք զբաղվածություն ապահովել: Գնաժամից դուրս գալու առաջին փուլը ֆինանսական համակարգի վերականգնումն է և միջբանկային շուկային շրջափակումից ազատումը: Լիկվիդայնության խնդիրները լուծելու համար պետք է գործի դնել մասնավոր խնայողությունները՝ վերջիններս ներդնելով պետական պարտատոմսերի մեջ:

Ճգնաժամը հաղթահարելու լավագույն ծրագիրը պետք է իր մեջ ներառի մասշտաբային օգնություն ցուցաբերելու, համախմբվածության, կենտրոնացվածության և արագ գործելակերպ ցուցաբերելու հատկանիշները: Նման իրավիճակում կարևորվում է միջազգային համագործակցության դերը: 2008 թվականի նոյեմբեր ամսին Եվրոպական հանձնաժողովը հրապարակեց տնտեսության բարձրացման ծրագիր 200 մլրդ եվրո ընդհանուր գումարով:

Այնուամենայնիվ, այս ծրագիրը համարվում է կարճաժամկետ միջոցառումների փաթեթ ճգնաժամից դուրս գալու համար: Այս ծրագիրը կարող էր նաև ընդգրկել գործատուների կողմից աշխատակիցներին մի քանի ամիսների ընթացքում սոցիալական օգնություն ցուցաբերելու դրույթը: Նման միջոցները հնարավորություն կտան տնտեսությանը ոտքի կանգնել, և կանխարգելել տնտեսության անցումը ճգնաժամից դեֆլացիայի: